Հավելված 6
«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-23/34» ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»-Ի ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-23/34»

ք. Ծաղկաձոր «01» օգոստոս 2023թ.

«Ծաղկաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Ն.Հարությունյանի, որը գործում է համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍՏ ԱՐՏ»-ն, ի դեմս տնօրեն Ա.Գուլոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***«Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի 3-րդ փողոցի ջրագծի փոխարինման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական աշխատանքներ»***-ի կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է ***250000 (երկու հարյուր հիսուն հազար)*** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[1]

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[2] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[1] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

[2] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների

նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ծաղկաձորի համայնքապետարան	**«ԱՍ ԱՐՏ» Ս/ՊԸ**
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9	**ք. Երևան Պարպի Լևոն 40**
ՀՀ ՖՆ ԳՎ	**ՀՎՀՀ 02264983**
ՀՎՀՀ 03027029	**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ**
Հ/Հ 900122000038	**Հ/Հ 22056333102800 0**
Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան	**Տնօրեն Ա.Գալոյան**
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«01» 08 2023թ. կնքված
«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-23/34» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը**
1	71241200	**Նախատեսել՝** ✓ Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի 3-րդ փողոցի մոտ 250մ. երկարությամբ խմելու ջրի խողովակաշարերի փոխարինում ✓ Պոլիէթիլենային խողովակ՝ F50 տրամաչափի, Pn16 ճնշում, ✓ Ներտնային միացումներ՝ մոտ 10 միացում ✓ Ասֆալտի շերտի վերականգնում ✓ Խրամուղու ամբողջական ետլիցք բազալտե ավազով՝ տոփանումով: 1. Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: 2. Յուրաքանչյուր մասի համար նախագիծը ներկայացնել 3-ական օրինակից, նախահաշիվը՝ 3-ական, նաև էլ տարբերակով; 3. Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները: 4. Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները: 5. Ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացնել նաև ռուսերեն լեզվով: **6. Իրականացնել փաստաթղթերի փորձաքննություն,** 7. Պատվիրված նախագծանախահաշվային փաստաթղթերում, մասնավորապես ծավալաթերթում պետք է արտացոլվեն նաև ծավալաթերթում ներառված ցանկացած շինարարական նյութի	դրամ	250000	250000	1	Ծաղկաձոր համայնք, Մեղրաձոր բնակավայր	Պայմանագրի կնքման պահից 20 օրացուցային օր

		որակական չափանիշները (բաղադրություն և այլն), հակառակ դեպքում նախագծերը չեն ընդունվի պատվիրատուի կողմից: 8. Նախատեսել օրացուցային գրաֆիկ՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետների: **9. Իրականացնել գեոդեզիական հանույթ (նշահարում):** **10. Նախագծանախահաշվային փաստաթղթերը նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ:** **Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝** ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N128-Ն հրամանի համաձայն Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն: **Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝** - ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում <ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՎՀՀ 03027029
Հ/Հ 900122000038
Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՍՏԱՏՍ» ՍՊԸ
ք. Երևան Պարպի Նովա 40
ՀՎՀՀ 02264983
«ԱԿԲԻ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 22056331028000
Տնօրեն Ա.Գուլոյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«01» 08 2023թ. կնքված
«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-23/34» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հիրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	Նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200	**«Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի 3-րդ փողոցի ջրագծի փոխարինման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական աշխատանքներ»**	0	0	0	0	0	0	0	250 000	250 000	250 000	250 000	250 000	**250 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՎՀՀ 03027029
Հ/Հ 900122000038
Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«US ԱՐՏ» ՍՊԸ
ք. Երևան Սայաթ-Նովա 40
ՀՎՀՀ 02264983
ԱՆԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 22056338028000
Տնօրեն Ա.Գասպարյան

(ստորագրություն)
Կ.Տ

Վճարման հանձնարարական N 14618

Ամսաթիվ/Ժամ **1 օգոստոս 2023թ. 10:49** **Կատարողի ՊԿ**

Վճարող	**«US ԱՐՏ» ՍՊԸ**		ԴԵԲԵՏ	Գումարը(թվերով)
ՏՀՏ Կոդ	**99 02264983** ՀՎՀՀ		h.N	
Վճարողի բանկը	**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Տերյան» մասնաճյուղ** **ք. Երևան**	Կոդ **22056**	**220563331028000**	**25,000.00 AMD**
Շահառու	**Կենտրոնական գանձապետարան**		ԿՐԵԴԻՏ	
Կոդ			h.N	
Շահառուի բանկ	**ՀՀ կենտրոնական բանկ** **ք. Երևան**	Կոդ **10300**	**900008000664**	

Գումարը տառերով՝ **Քսանհինգ հազար Դրամ 00 լումա**

Նպատակ **Նախագծանախահաշվային փաստաթղթերի ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-23/34 պայմանագրի ապահովվում**

Շահառուին վճարման ամսաթիվ

Միջնորդավճար **100 ՀՀ դրամ**

Կ.S. Հաճախորդի ստորագրությունները ✓

Ձևակերպված է ACBA-ONLINE համակարգով 01/08/2023

Գործարքի կոդ 87381945

Կատարման ամսաթիվ՝
01/08/23

eFO 72-03-02/3#3

Վճարման հանձնարարական N 14740

Ամսաթիվ/Ժամ **1 օգոստոս 2023թ. 10:49** **Կատարողի ՊԿ**

Վճարող	**«ՍՏ ԱՐՏ» ՍՊԸ**		ԴԵԲԵՏ	Գումարը(թվերով)
ՏՀՏ Կոդ	**99 02264983** ՀՎՀՀ		h.N	
Վճարողի բանկը	**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Տերյան» մասնաճյուղ** **ք. Երևան**	Կոդ **22056**	**220563331028000**	**37,500.00 AMD**
Շահառու	**Կենտրոնական գանձապետարան**		ԿՐԵԴԻՏ	
Կոդ			h.N	
Շահառուի բանկ	**ՀՀ կենտրոնական բանկ** **ք. Երևան**	Կոդ **10300**	**900008000698**	

Գումարը տառերով՝ **Երեսունյոթ հազար հինգ հարյուր Դրամ 00 լումա**

Նպատակ **Նախագծանախահաշվային փաստաթղթ. «ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-23/34» պայմանագրի որակավորման ապահովում**

Շահառուին վճարման ամսաթիվ

Միջնորդավճար **100 ՀՀ դրամ**

Կ.Տ. Հաճախորդի ստորագրությունները ✓

Ձևակերպված է ACBA-ONLINE համակարգով 01/08/2023

Գործարքի կոդ 87382157

Կատարման ամսաթիվ՝
01/08/23

eFO 72-03-02/3#3

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

01 ՕԳՈՍՏՈՍ 2023Թ. ԿՆՔՎԱԾ N «ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-23/34» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Ծաղկաձոր «18» օգոստոս 2023թ.

«Ծաղկաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Ն.Հարությունյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՍՏ ԱՐՏ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն Ա.Գուլոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), ցուցաբերելով երկկողմանի կամահայտնություն, հիմք ընդունելով 01.08.2023թ. կնքված N **«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-23/34»** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը, «ՍՏ ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 14.08.2023թ. ներկայացված գրությունը, ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան
   1.1 Կողմերը համաձայնում են **01 օգոստոս 2023թ. կնքված N «ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-23/34»** գնման պայմանագրում 2023 թվականի օգոստոսի 18-ին կատարել հետևյալ փոփոխությունները.
   1.2 Պայմանագրի հավելված թիվ 1 ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ը շարադրել նոր խմբագրությամբ. (Հավելված թիվ 1-ը կցվում է)՝ աշխատանքների կատարման ավարտը սահմանելով՝ **2023 թվականի սեպտեմբերի 10**-ը:
   1.3 Սույն համաձայնագրում չնշված Գնման պայմանագրով նախատեսված դրույթները թողնվում են անփոփոխ:
   1.4 Սույն համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով , 2 օրինակից , որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ծաղկաձորի համայնքապետարան **ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9** **ՀՀ ՖՆ ԳՎ** **ՀՎՀՀ 03027029** **Հ/Հ 900122000038** **Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան** ---------- (ստորագրություն) Կ.Տ.	**«ՍՏ ԱՐՏ» ՍՊԸ** **ք. Երևան Նարեկացի 40** **ՀՎՀՀ 02264983** **«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ** **Հ/Հ 22056333102800 0** **Տնօրեն Ա.Գուլոյան** ---------- (ստորագրություն) Կ.Տ.

6.3.1 5134

258

Հավելված N 1
« 01 » օգոստոս 2023թ. կնքված
«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-23/34» ծածկագրով պայմանագրի և
«18» օգոստոս 2023թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը**
1	71241200	**Նախատեսել՝** ✓ Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի 3-րդ փողոցի մոտ 250մ. երկարությամբ խմելու ջրի խողովակաշարերի փոխարինում ✓ Պոլիէթիլենային խողովակ՝ F50 տրամաչափի, Pn16 ճնշում, ✓ Ներտնային միացումներ՝ մոտ 10 միացում ✓ Ասֆալտի շերտի վերականագնում ✓ Խրամուղու ամբողջական ետլիցք բազալտե ավազով՝ տոփանումով: 1. Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: 2. Յուրաքանչյուր մասի համար նախագիծը ներկայացնել 3-ական օրինակից, նախահաշիվը՝ 3-ական, նաև էլ տարբերակով; 3. Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները: 4. Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և	դրամ	250 000	2500 00	1	Ծաղկաձոր համայնք, Մեղրաձոր բնակավայր	Պայմանագրի կնքման պահից 2023թ. սեպտեմբերի 10

		մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները: 5. Ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացնել նաև ռուսերեն լեզվով: **6. Իրականացնել փաստաթղթերի փորձաքննություն,** 7. Պատվիրված նախագծանախահաշվային փաստաթղթերում, մասնավորապես ծավալաթերթում պետք է արտացոլվեն նաև ծավալաթերթում ներառված ցանկացած շինարարական նյութի որակական չափանիշները (բաղադրություն և այլն), հակառակ դեպքում նախագծերը չեն ընդունվի պատվիրատուի կողմից: 8. Նախատեսել օրացուցային գրաֆիկ՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետների: **9. Իրականացնել գեոդեզիական հանույթ (նշահարում):** **10. Նախագծանախահաշվային փաստաթղթերը նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ:** **Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝** ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N128-Ն հրամանի համաձայն Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն: **Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝** - ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում <ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՎՀՀ 03027029
Հ/Հ 900122000038
Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՍՏ ԱՐՏ» ՍՊԸ
ք. Երևան Սայաթ-Նովա 40
ՀՎՀՀ 02264983
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 22056333028000
Տնօրեն Ա.Գոլոյան

(ստորագրություն)
Կ.Տ